



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում
Քրեական գործ թիվ 0224/01/09թ.
Նախագահող դատավոր՝ Կ.Սադյան
Դատավորներ՝ Հ.Աբրահամյան
Ն.Գրիգորյան

Քրեական գործ թիվ 0224/01/09թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

«26» փետրվարի 2010թ.

ք.Ստեփանակերտ

ԼՂՀ Գերագույն դատարանը վճռաբեկության կարգով՝

Նախագահությամբ դատավոր՝
Մասնակցությամբ դատավորներ՝

Կ.Ղարայանի
Գ.Գրիգորյանի
Ի.Կարապետյանի

Դռնբաց դատական նիստում քննելով ըստ մեղադրանքի Գենադի Ջավադի Ներսեսյանի՝ նախատեսված ԼՂՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի երրորդ մասի առաջին և երկրորդ կետերով՝ քրեական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2009թ. նոյեմբերի 30-ի որոշման դեմ ամբաստանյալ Գենադի Ջավադի Ներսեսյանի բերած վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

ԼՂՀ ոստիկանության քննչական վարչության Շուշիի շրջանի քննչական խմբի քննիչի 2009թ. մայիսի 22-ի որոշմամբ Արկադի Ջավադի, Գենադի Ջավադի, Արմեն Արամայիսի և Ջավադ Արամայիսի Ներսեսյանների նկատմամբ հարուցվել է քրեական գործ՝ ԼՂՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի երրորդ մասի առաջին և երկրորդ կետերի հատկանիշներով:

ԼՂՀ ոստիկանության քննչական վարչության Շուշիի շրջանի քննչական խմբի քննիչի 2009թ. հուլիսի 15-ի որոշմամբ Գենադի Ջավադի Ներսեսյանին մեղադրանք է առաջադրվել

ԼՂՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի երրորդ մասի առաջին և երկրորդ կետերի հատկանիշներով:

2009թ. օգոստոսի 21-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2009թ. սեպտեմբերի 29-ի դատավճռով Գենադի Ջավադի Ներսեսյանին մեղավոր է ճանաչել ԼՂՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի երրորդ մասի առաջին և երկրորդ կետերով ու նշանակել պատիժ՝ ազատազրկում 1 /մեկ/ տարի 2 /երկու/ ամիս ժամկետով: ԼՂՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի առաջին մասի պահանջներին համաձայն՝ նախորդ դատավճռով նշանակված պատժի չկրած մասը մասնակիորեն գումարելու միջոցով վերջնական պատիժ է նշանակել ազատազրկում 4 /չորս/ տարի 2 /երկու/ ամիս ժամկետով:

ԼՂՀ վերաքննիչ դատարանը 2009թ. նոյեմբերի 30-ի որոշմամբ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009թ. սեպտեմբերի 29-ի դատավճիռը թողել է օրինական ուժի մեջ:

Նշված որոշման իրեն վերաբերվող մասի դեմ վճռաբեկ բողոք է բերել Գենադի Ջավադի Ներսեսյանը:

Վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

Գործով դատապարտված են նաև Արկադի Ջավադի, Արմեն Արամայիսի և Ջավադ Արամայիսի Ներսեսյանները, որոնք վերոնշյալ դատական ակտերը վերաքննության և վճռաբեկության կարգով չեն բողոքարկել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

ԼՂՀ վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածը, 62-րդ հոդվածի առաջին մասի չորրորդ, իններորդ կետերը, ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 413-րդ հոդվածի առաջին և երկրորդ կետերի պահանջները:

Նշված պնդումները բողոք բերողը հիմնավորում է հետևյալ փաստարկներով.

ԼՂՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի համաձայն՝ պատիժ նշանակելու և պատժաչափը որոշելու ընթացքում դատարանը հաշվի չի առել իր արարքի բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, իր անձը, ինչպես նաև պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները. մասնավորապես՝ խնամքին մինչև տասնչորս տարեկան երեխա ունենալը, իր ակտիվ մասնակցությունը ԼՂՀ տարածքային ամբողջականության պաշտպանությանն ուղղված ռազմական գործողություններին, որի համար բազմիցս պարգևատրվել է ԼՂՀ իշխանությունների կողմից, ինչպես նաև նախաքննության մարմինների հետ ակտիվ համագործակցությունը:

Դատարանը կայացնելով դատական ակտը հաշվի չի առել այն հանգամանքները, որ բողոք բերողը հասարակական կարգը խախտելու մտադրություն չի ունեցել, որ վիճաբանության համար պատճառ է հանդիսացել բնակարանի համար փոխանցված գումարը, որը չի հասել հասցեատիրոջը, ինչի հետևանքով էլ բռնկվել է վեճը, որ հետագայում Ներսեսյանները հաշտվել են և փոխադարձ պահանջներ չունեն:

Բողոք բերողը գտնում է, որ իր գործողություններում բացակայում են ԼՂՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի երրորդ մասի առաջին և երկրորդ կետերով նախատեսված հանցագործության հատկանիշները, և որ իր գործողությունները պետք է որակվեին ԼՂՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով:

Խնդրում է բավարարել վճռաբեկ բողոքը, իր մասով բեկանել և փոփոխել ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2009թ. նոյեմբերի 30-ի դատական ակտը, նրա արարքը որակել ԼՂՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով և այդ մասով կարճել գործի վարույթը՝ Ջավադ Արամայիսի Ներսեսյանի հետ հաշտվելու կապակցությամբ:

3.Գործի փաստական հանգամանքները.

Գենադի Ջավադի Ներսեսյանը մեղադրվում է այն բանի համար, որ 2009թ. մայիսի 9-ին, ժամը 20:30 սահմաններում, գտնվելով թեթև աստիճանի ալկոհոլային հարբածության ներքո, իր եղբոր՝ Արկադի Ջավադի Ներսեսյանի հետ ներկայանալով Շուշի քաղաքի Գ.Նժդեհ փողոցի թիվ 19ա տան մոտ և հանդիպելով իրենց եղբոր որդիներ՝ Արմեն և Ջավադ Արամայիսի Ներսեսյաններին, հաստատապես գիտակցելով, որ գտնվում են հասարակական վայրում, վերջիններիս հետ մտնելով վիճաբանության մեջ, խմբով՝ Արկադի Ջավադի Ներսեսյանի հետ, դիտավորությամբ, կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը, բացահայտ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելով հասարակության նկատմամբ, մտել է նրանց հետ փոխադարձ վեճակովի մեջ, որի ընթացքում իր գործողություններն ուղեկցելով բարձրաձայն անցենզուր հայհոյանքներով, որը զուգորդված էր բռնություն գործադրելով, ձեռքերով հարվածներ է հասցրել Արմեն և Ջավադ Արամայիսի Ներսեսյաններին, պատճառելով Ջավադ Ներսեսյանին առողջության թեթև վնաս, իսկ Արմեն Ներսեսյանին՝ առողջության թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնաս, և այդ ընթացքում համառորեն շարունակել է իր խուլիգանական գործողությունները, որը տևել է մոտավորապես 15-20 րոպե, խմբով, դիմադրություն ցուցաբերելով խուլիգանությունը խափանող երրորդ կարգի հաշմանդամ Արամայիս Ջավադի Ներսեսյանին և Վազգեն Արարատի Գասպարյանին, պատռելով վերջինիս սպորտային անդրավարտիկը, պատճառելով նրան ֆիզիկական և գույքային վնաս, այդպիսով 15-20 րոպե տևողությամբ ժամանակահատվածում կոպիտ կերպով խախտել է հասարակական կարգը և մոտակա տարածքում գտնվող անձանց հանգիստը, այսինքն՝ կատարել է հանցագործություն, նախատեսված ԼՂՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի երրորդ մասի առաջին և երկրորդ կետերով, մի խումբ անձանց կողմից խուլիգանություն կատարելու, հասարակական կարգի խախտումը խափանող անձին դիմադրություն ցույց տալու որակող հատկանիշներով:

4.ԼՂՀ Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը ԼՂՀ Գերագույն դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

Գենադի Ջավադի Ներսեսյանին մեղսագրվող արարքը սահմանված է ԼՂՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի երրորդ մասի առաջին և երկրորդ կետերով, ըստ որոնց՝ խուլիգանությունը՝ դիտավորությամբ հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելը, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով, կատարվել է մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից, զուգորդվել էհասարակական կարգի խախտումը խափանող անձին դիմադրություն ցույց տալով:

Խուլիգանությունը կարող է կատարվել միայն ուղղակի դիտավորությամբ: Դա նշանակում է, որ մեղավոր անձը ոչ միայն գիտակցում է, որ իր գործողություններով խախտում է հասարակական կարգն ու բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորում հանրության հանդեպ, այլև ցանկանում է կատարել այդ գործողությունները:

Արարքի ճիշտ քրեաիրավական գնահատման համար խիստ կարևոր է հանցագործության շարժառիթի բացահայտումը: Խուլիզանությունը սուբյեկտիվ կողմից բնութագրվում է նաև յուրահատուկ շարժառիթով՝ խուլիզանական մղումներով: Արարքը համարվում է խուլիզանական մղումներով կատարված, եթե այն կատարվում է հասարակության և բարոյականության նորմերի նկատմամբ անթաքույց արհամարհանքի հողի վրա, երբ մեղավոր անձի վարքը հանդիսանում է բացահայտ մարտահրավեր՝ ուղղված հասարակական կարգի դեմ և թելադրված է լինում շրջապատին հակադրվելու, վերջինիս հանդեպ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելու ցանկությամբ: Խուլիզանական մղումների առկայությունն է թույլ տալիս սահմանազատելու խուլիզանությունը այլ՝ օրինակ, անձի դեմ ուղղված հանցագործություններից:

Արարքը որպես խուլիզանություն որակելու և խուլիզանության հանցակազմի ճիշտ բացահայտման համար անհրաժեշտ է բացահայտել «հասարակական կարգի կոպիտ խախտում» արժեքավորող հասկացության էությունը: Հասարակական կարգի կոպիտ խախտում պետք է համարել անձի կողմից այնպիսի գործողությունների կատարելը, որոնք չարամտորեն խախտում են հասարակության բարոյական նորմերը և էական վնաս են պատճառում քաղաքացիների, կազմակերպությունների՝ օրենքով պահպանվող իրավունքներին և շահերին, այսինքն սպառնալիք են ստեղծում կազմակերպությունների, հիմնարկների բնականոն գործունեության, անձի առողջության, բարոյականության համար, ինչպես նաև քաղաքացիների մեջ տագնապ են առաջացնում իրենց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության կապակցությամբ:

Գործով ձեռք բերված ապացույցների վերլուծությունից հետևում է, որ Ներսեսյանները միմյանց հետ մոտիկ բարեկամական կապի մեջ են գտնվում, և որ նրանց միջև գոյություն ունեցող հարաբերությունները միշտ լարված են եղել, իսկ Ջավադ Ներսեսյանին պատկանող տան վարձն իրեն չփոխանցելու վերաբերյալ առկա վեճն էլ հանդիսացել է հետագայում վիճաբանության և ծեծկոտուքի պատճառ /հատ.1-ին, գ.-թ.37, 164/: Գործի նյութերով հաստատվել է նաև, որ 2009թ. մայիսի 9-ին Գենադի և Արկադի Ներսեսյանները գտնվում էին «Էլդորադո» ռեստորանում, երբ իրենց եղբայրը՝ Արմեն և Ջավադ Ներսեսյանների հայր Արամայիս Ներսեսյանը զանգել և հրավիրել է իրենց քաղաք Շուշի՝ վերը նշված տան վարձի հետ կապված հարցերը պարզելու համար, այսինքն նրանց միջև առկա էր կենցաղային հողի վրա առաջացած լարվածություն, որը պարզելու համար էլ Արկադի և Գենադի Ներսեսյանները հրավիրվեցին քաղաք Շուշի:

Սույն գործով դեպքի վայրի գնության արձանագրության համաձայն՝ դեպքի վայրը շրջապատված է անմարդաբնակ, անավարտ շինություններով, 100մ դեպի վերև գտնվում է Գ.Նժդեհ փողոցի թիվ 21 շենքը, 50մ ներքև՝ առանձնատուն /հատ.1-ին, գ.-թ. 13-15/:

Մեղադրական եզրակացության համաձայն՝ Գենադի Ներսեսյանը մեղադրվում է այն բանի համար, որ նա, դիմադրություն ցուցաբերելով խուլիզանությունը խափանող երկրորդ կարգի հաշմանդամ Արամայիս Ջավադի Ներսեսյանին և Վազգեն Արարատի Գասպարյանին, պատռելով վերջինիս սպորտային անդրավարտիկը, նրան պատճառել է ֆիզիկական և գույքային վնաս: Նույն արարքը մեղսագրվում է նաև Արկադի Ջավադի Ներսեսյանին /հատ.2-րդ, գ.-թ. 44/: Մինչդեռ տուժողի ցուցմունքներում Գենադի Ներսեսյանի կողմից իրեն վնաս հասցնելու մասին որևէ նշում առկա չէ /հատ. 1-ին, գ.-թ. 59-60, 67-69/:

ԼՂՀ Գերագույն դատարանն արձանագրում է, որ նախաքննության մարմինը որևէ կերպ չի հստակեցրել և չի հիմնավորել, թե ինչու է կայանում տուժող ճանաչված քաղաքացուն հասցրած ֆիզիկական վնասը, ինչ չափերի գույքային վնաս է նրան հասցվել, ինչ հանգամանքներում և կոնկրետ ում կողմից, և առկա էական հակասությունը չի վերացվել ոչ նախաքննության մարմնի և ոչ էլ ստորադաս դատարանների կողմից:

Դատաբժշկական փորձագետի 21.05.2009թ. թիվ 42/հ և ի լրացումն վերջինիս 02.06.2009թ. թիվ 42/լր եզրակացությունների համաձայն՝ Գենադի Ներսեսյանը, հնարավոր է վեճակովի ընթացքում ստացել է մարմնական վնասվածքներ՝ անբողջ մարմնի սալջարդի, գլխուղեղի ցնցման, քթոսկրերի կոտրվածքի, աջից գոտկային շրջանի փափուկ հյուսվածքների սալջարդի ձևով, որոնք առաջացրել են առողջության թեթև վնաս, առողջության կարճատև քայքայումով /հատ. 1-ին, գ.-թ. 89-94/:

ԼՂՀ Գերագույն դատարանը անհրաժեշտ է համարում ընդգծել, որ եթե մեղավոր անձի գործողությունները կատարվել են ոչ խուլիգանական մղումներով և չեն զուգորդվել հասարակական կարգի կոպիտ խախտմամբ, ապա արարքը չի կարող որակվել որպես խուլիգանություն: Անձնական դրդումներով նույնիսկ հասարակական վայրերում ծեծկոտուքն ու վիճաբանությունը միշտ չէ, որ կարող են որակվել որպես խուլիգանություն: Դա կախված է կատարվող արարքի տևականությունից, հանցավորի՝ կողմնակի անձանց նկատմամբ դրսևորած վերաբերմունքից:

Ինչպես հաստատվել է գործի նյութերով, միջադեպին նախորդող պահին և նույնիսկ բուն միջադեպի ընթացքում Գենադի Ներսեսյանը նպատակ չի ունեցել կոպիտ կերպով խախտել հասարակական կարգը և բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորել հանրության նկատմամբ, նրա գործողությունների հետևանքով ԼՂՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի իմաստով հասարակական կարգի կոպիտ խախտում տեղի չի ունեցել:

Նման պայմաններում ԼՂՀ Գերագույն դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանի հետևություններն այն մասին, որ Գենադի Ներսեսյանը թույլ է տվել հասարակական կարգի կոպիտ խախտում և հասարակության նկատմամբ ակնհայտ անհարգալից վերաբերմունքի դրսևորում, հակասում են գործի նյութերին, որովհետև ինչպես վկայում են գործի նյութերը, վեճակովի ծագել է ոչ թե խուլիգանական մղումներով, այլ Գենադի, Արկադի Ջավադի և Արմեն, Ջավադ Արամայիսի Ներսեսյանների միջև մինչ այդ կենցաղային հողի վրա լարված անձնական փոխհարաբերությունները պարզելու առիթով: Տվյալ պարագայում Գենադի Ներսեսյանն ի սկզբանե նպատակ չի ունեցել կոպիտ կերպով խախտել հասարակական կարգը և անհարգալից վերաբերմունք դրսևորել հասարակության նկատմամբ, ուստի նրա գործողություններում բացակայում է խուլիգանության հանցակազմը, և նրա գործողությունները պետք է որակել ԼՂՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 194-րդ հոդվածը սահմանում է մասնավոր հետապնդման, այսինքն՝ տուժողի բողոքի հիման վրա հարուցվող քրեական գործերի սպառիչ ցանկը, որոնց մեջ մատնանշված է նաև ԼՂՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածը:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 33-րդ և 194-րդ հոդվածների ուժով մասնավոր մեղադրանքով գործ հարուցելու և դրանով քրեական հետապնդում իրականացնելու հնարավորությունը լիովին կախված է տուժողի՝ հանցավորին քրեական պատասխանատվության ենթարկելու միջոցով իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար քրեական հետապնդման մարմնին դիմելու ցանկությունից և կամ արտահայտությունից:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործը ենթակա է կարճման, եթե բացակայում է տուժողի բողոքը, ինչը և առկա է սույն գործով:

Քրեական գործի հարուցման առիթ է հանդիսացել 09.05.2009թ. Արկադի Ներսեսյանի դիմումն այն մասին, որ իրեն և իր եղբորը՝ Գենադի Ներսեսյանին ծեծի են ենթարկել և հասցրել մարմնական վնասվածքներ իրենց եղբոր որդիներ՝ Արմեն և Ջավադ Արամայիսի Ներսեսյանները /հատ.1-ին գ.-թ.-3/:

Սույն գործով բացակայում է Գենադի Ներսեսյանի գործողությունների հետևանքով վնաս կրելու մասին վեճակովի մասնակիցներից որևէ մեկի բողոքը: Ավելին՝ գործի նյութերից երևում է, որ Ներսեսյանները հաշտվել են դեռ ստորադաս դատարաններում դատաքննությունների ժամանակ և միմյանց նկատմամբ բողոք չունեին / հատ. 2-րդ, գ.-թ. 9, 36, 43/:

Հաշվի առնելով վերը շարադրված պատճառաբանությունները, ԼՂՀ Գերագույն դատարանը գտնում է, որ սույն գործով ինչպես նախաքննության մարմինը, այնպես էլ ստորադաս դատարանները ճիշտ իրավական գնահատական չեն տվել ամբաստանյալ Գենադի Ներսեսյանի արարքներին, վիճաբանության առիթին, հանցագործության կատարման շարժառիթներին և իրական դրդապատճառներին՝ նրա արարքի իրավական որակման հարցում հանգելով ակնհայտ սխալ եզրակացության: Արդյունքում թույլ է տրվել քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում:

Վճռաբեկ բողոք բերելու հիմքերը ըստ ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 424-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի՝ դատական սխալն է՝ նյութական կամ դատավարական օրենքի այնպիսի խախտումը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա: Նշված հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ Գերագույն դատարանը դատավարության մասնակիցների նյութական կամ դատավարական իրավունքի խախտման հարցի լուծման ընթացքում ղեկավարվում է նույն օրենսգրքի 415-րդ և 416-րդ հոդվածներով: ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 415-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ քրեական օրենքի... ոչ ճիշտ կիրառումը քրեական օրենքի այն հոդվածի կամ հոդվածի մասի կիրառումն է, որը ենթակա չէր կիրառման...: Նույն հոդվածի երկրորդ մասը սահմանում է, որ գործի քննության ընթացքում գտնելով, որ արարքն իրավաբանորեն ճիշտ որակված չէ, ...դատարանն իրավունք ունի փոխել հանցագործության որակումը քրեական օրենքի այն հոդվածով, որը պատասխանատվություն է նախատեսում ավելի թեթև հանցագործության համար:

ԼՂՀ Գերագույն դատարանը գտնում է, որ սույն գործով ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 436-րդ հոդվածի առաջին մասի չորրորդ կետով սահմանված դատական ակտը բեկանելու ԼՂՀ Գերագույն դատարանի լիազորության կիրառումը անհրաժեշտ է հետևյալ հիմնավորմամբ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ... նրան ներկայացված է ցանկացած քրեական մեղադրանք, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: Գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի վերոնշյալ հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: ԼՂՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ ու անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք»:

Տվյալ դեպքում ԼՂՀ Գերագույն դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

ԼՂՀ Գերագույն դատարանը գտնում է, որ ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2009թ. նոյեմբերի 30-ի դատական ակտը Գենադի Ներսեսյանի մասով ենթակա է բեկանման, նրա արարքը ենթակա է որակման ԼՂՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով, և քրեական գործի

վարույթը Գենադի Ներսեսյանի մասով՝ կարճման, տուժողի կողմից բողոքի բացակայության, ինչպես նաև Ներսեսյանների հաշտության կապակցությամբ:

Դատական ակտը բեկանելիս ԼՂՀ Գերագույն դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 421-րդ, 436-րդ, 438-440-րդ հոդվածներով՝ ԼՂՀ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ամբաստանյալ Գենադի Ներսեսյանի վճռաբեկ բողոքը բավարարել: Գենադի Ներսեսյանի մասով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2009թ. նոյեմբերի 30-ի որոշումը բեկանել, Գենադի Ներսեսյանի արարքը վերաորակել ԼՂՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով և այդ մասով գործի վարույթը կարճել:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

Կ.ՂԱՐԱՅԱՆ

Դատավորներ՝

**Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**